

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(շաբթի կիրակի և առն օրերէն)

Խմբագրութիւնը ընդունւում է առանձին լիցիտով.

Խմբագրութիւնների հետքը վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն 253.

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կատարեալ անապատութիւն.—Ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Կաղաւանից. Նա-
մակ Իգգիբից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիբլիսից. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒՄԵՐԻ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆԱՊԱՏՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ մի
ամիս անցանք առաջ Բագուում կայացաւ
մի ջննդող դատարանի վճիռ տեղական
«Կաւմի» լրագրի աշխատակից Կոզորէն-
հօի հրատարակած մի ֆելետոնի վերա-
բերութեամբ: Միջնորդ դատարանը բազ-
մաթիւ նիստեր կայացրեց, մանրամասն
ուսումնասիրեց նրան յանձնած գործը,
բարեխիղճ կերպով հետազոտեց եղած նիւ-
թերը և վկայութիւնները և կայացրեց
այն վճիռը, որ յայտնի է արդէն մեր ըն-
թերցողներին: Այժմ Բագուում հրաւիր-
ված է մի նոր երկրորդ միջնորդ դատա-
րան, որ պէտք է ընկնէ նոյն «Կաւմի» լը-
րագրի մի աւելի աշխատակից գրողաձեռ
Բագուի ինժեներներից մէկի գործունէու-
թեան մասին: Միջնորդ դատարանը ար-
դէն սկսել է իր նիստերը և ընտու է ի-
րանց յանձնած գործը:

Այդպիսով միջնորդ դատարան հրաւի-
րելով սովորութիւն է դառնում Բագուի
մէջ գրական վերաւորանքների և յարձա-
կունների դէմ պաշտպանվելու նպատակով
Միջնորդ դատարանները կշռում են երկու
կողմերի առարկութիւնները և տալիս ի-
րանց վճիռը, որը, ի հարկէ, ունի միայն
բարոյական նշանակութիւն: Բայց որպէս
զի վճիռը իսկապէս ունենայ հեղինակու-
թիւն և միջնորդ դատարանը կատարէ իր
բարոյական դերը, անհրաժեշտ է, որ միջ-
նորդ դատարանները վերաբերվեն գործին
անպայման բարեխիղճութեամբ և կատա-
րեալ անապատութեամբ: Այլապէս այդ
դատարանը կը կորցնէ իր նշանակութիւ-
նը և մարդիկ այլ ևս չեն գիմի նրան
բարոյական բաւարարութիւն ստանալու
նպատակով:

Մամուլի մէջ երևացող յարձակումներին
և վերաւորանքներին անկասկած կարելի է
պատասխանել նոյն մամուլի միջոցով,
ուպադրելով հերքում կամ բացատրութիւն:
Դա ամենատեղեական, ամենապարզ և ա-
մենալոգիկական եղանակն է, որ և առհաս-
տարակ գործադրվում է: Սակայն կան ան-
ձինք, որոնք չեն դիմում այդ եղանակին
և տանում են գործը դատարան: Այն-
տեղ պահանջելով բաւարարութիւն: Մենք
ուրիշ չունենք ասելու դատաստանական
ընտելեան դէմ: Դատարանը այն հիմ-
նարկութիւններով մէկն է, որ կապած է
պաշտպանելու մարդկանց պատիւը և նը-
րանց իրաւունքները: Սակայն չը պէտք է
մոռանալ, որ դատարանը ընդունակ է բա-
ւարար կերպով կատարել իր պարտաւո-
րութիւնը այն ժամանակ, երբ նա վիճող
կողմերին տալիս է կատարեալ կարողու-
թիւն բերելու իրանց պաշտպանութեան
համար բազմակողմանի ապացոյցներ: Ներ-
կայ օրէնսդրութիւնը տալիս է կարողու-
թիւն դատարանի մէջ բարեխիղճ կերպով
կատարել գրական վերաւորանքների ընտե-
լիւնը: Դա օրէնքի այն յօդուածն է, որ
վերաբերում է զրպարտութեանը: Իսկ
կենսերի մէջ մենք նկատում ենք, որ իրանց
վերաւորված համարող անձինք չեն դի-
մում այդ յօդուածին, այլ առաջ են մը-
ղում մի ուժեղ յօդուած, այն է 1039-րորդը,
որ ունի կաշկանդիչ բնաւորութիւն և
պաշտպանութեան համար փակում է ձա-
նապարհը, պնդելով, որ բոլոր վկայու-
թիւնները պէտք է լինեն գրաւոր, թղթով

վաւերացված: Այդ յօդուածը յայտնի է
գրիֆամագրայի յօդուած անունով:
Գրիֆամագրայի յօդուածով հեշտ է
դատարանի Բայց այդ դատարանը այն
բարոյական նշանակութիւնը, որ սպաս-
վում է դատարանից: Հասարակութեան
մէջ մնում է այն համոզմունքը, թէ դա-
տարարութեամբ անմեղ է, թէ նա կապա-
ցուցանել իր գործը, եթէ նա կաշկանդ-
ված չը լինէր յայտնի սահմանադրա-
նում: Ձը նայելով այդ հանգամանքին,
շատերը դիմում են այդ յօդուածին, աչքի
առաջ ունենալով ոչ թէ բարոյական բարձր
բաւարարութիւն, այլ մի որոշ նիւթա-
կան կամ ֆիզիկական վնաս իրանց հա-
կառակորդին:

Այդ հանգամանքներում բոլորովին հաս-
կանալի է մեզ համար այն միջոցը, որին
գիմում են Բագուում գրական վերաւո-
րանքներից և յարձակումներից պաշտպա-
նութիւն գտնելու նպատակով: Բայց այդ-
տեղ բնականաբար հարց է ծագում միջ-
նորդ դատարանների կատարեալ անապա-
տութեան և բարեխիղճութեան վերաբե-
րութեամբ: Դա շատ կարեւոր և ծանրա-
կշիռ կէտ է, որի վրա անհրաժեշտ է
դարձնել առանձնապէս լուրջ ուշադրու-
թիւն, որպէս զի դատարանի վճիռն ունե-
նայ բարոյական նշանակութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ս Մ Ո Ւ Լ

Ձուր չեն ամեն օր կրկնում, թէ ժամանակա-
կից քաղաքակրթութեան պտուղներով զինված
մարդը միայն կարող է մի հաստատ և ապահով
անկեղծ գրաւել կենսի մէջ և այդպիսով նուա-
ճել իր համար մի բարեխիղճ կեցութիւն: Այդ
հայտարարութիւնը նկատելի է մանաւանդ գիւղա-
տնտեսութեան մէջ: Մարդիկ, որոնք ուսումնա-
սիրում են գիւղական տարրի ներկայ անմիջ-
թաղ դրութիւնը, միշտ այն են ասում, որ չա-
րիքի գիւղաւոր պատճառներից մէկը յետաձա-
ցութիւնն է, գիւղացու համար չեն այն կատա-
րելագործութիւնները, որոնք հետզհետէ ստեղծ-
վում են գիւղական տնտեսութեան մէջ գործա-
ծելի մեքենաների և գործիքների համար: Գիտու-
թիւնը առաջ է գնում, հնարներ է գտնում, իսկ
մեր գիւղացին կպած է իր հին աւանդութիւն-
ներին, առաջ է տանում իր գործը այն միջոց-
ներով, որոնք իբրեւ աւանդութիւն մնացել են
նրա հետաւոր նախնիներից, անյիշելի դարերի
սկզբից: Այդ պատճառով նա տարեց տարի յետ
է մնում, նրա տնտեսութիւնը քայքայվում է և
նա, չը նայած որ առաջվայ նման քրտինը
է թափում, զրկված է, կարծաւ: Նրան շատ դը-
ժուար է հասկանալ, որ երկրագործութիւնը
կատարելագործված միջոցներով պիտի բարձրա-
նայ, վերակենդան գիւղական աշխատանքների
արժէքը և ապահովել գիւղական աշխատաւորին:
Այդ տեսակ քարոզները ոչինչ են համարվում. և
սակայն բազմաթիւ գեղեցիկ օրինակները ան-
հերքելի ապացոյցներ են, որ ուրիշ միջոց չը
կայ, որ փրկութիւնը միայն առաջադիմութեան
մէջ է: «Росскія Вѣд.» լրագրիւր նկարագրում է
հարաւային Ռուսաստանի մի քանի տեղերում
զարգացած երկրագործութիւնը: Ձանապակ կող-
մերից հաւաքված երկրագործներ նոր գիւղեր են
կազմել և, ազատ լինելով նախապաշարմունքնե-
րից և կոյր աւանդապաշտութիւնից, հաստա-
տել են այնպիսի կարգեր, որոնք յիշատակ են
Ամերիկայի: Իւրաքանչիւր գիւղացի շատ փոքրիկ
հողաբաժին է ստացել, 3/4 դեքտաւրին բայց
այդ չէ արդեւում, որ նա վարձով վերցնէ կա-
լուածատէրերից 20—30 դեքտաւրին հող և հեր-
կէ: Ամենապիտանութիւն է, որ նա ունի կարողու-
թիւն մեծ տարածութիւններ հերկելու, իսկ այդ
կարողութիւնը նա ձեռք է բերում գիւղատնտե-
սական կատարելագործված մեքենաների միջո-
ցով: Այդ աշխատաւորները կատարելապէս ներ-
կայացնում են հողագործի նոր տիպը. նրանք

ամենայն յօժարութեամբ փոխ են առնում կա-
լուածատէրերից և գերմանացի գաղթականնե-
րից ժակութեան նոր սխտեմը: Այդ բանի հետ
նրանք միացել են և զարմանալի աշխատու-
թիւն: Նրանք չեն դիմում ժակներ վարձելու
սովորութեան, այլ գործադրում են իրանց ըն-
տանիքի ոյժերը:

Վարող և հնձող մեքենաների օգնութեամբ
ինքը գիւղացին, ունենալով երկու զոյգ ձիա-
ներ փոխելով գործելու համար և մի անշա-
փաստ տղայ, որ կարող է նստել ձիու վրա
և քշել, ազատ կարող է ամառը 50 դեքտա-
ւրին հնձել: Ի հարկէ, նա պիտի սաստիկ լա-
րէ իր եռանդը. և իրաւ, հարուստ գիւղացին
անգամ, որ 50—100 դեքտաւրին հող ունի
վարձով կամ իբրեւ սեփականութիւն, իր ամ-
բող ընտանիքի հետ աշխատում է անխնայ
կերպով, ամբողջ չաքալը միայն հացով և
կվաթով կերակրվելով, առանց տաք կերակրի,
որը եփելու ժամանակ չը կայ և շատ անգամ
լուսնեակ գիշերներն էլ գործում է մինչև
կէս գիշեր: Այդ զարմանալի եռանդոտ աշխա-
տաւորութիւնն էլ այն կարեւոր գործիքն է,
որ գիւղացին ձեռք է բերում այն արդութեան
մէջ, որ նա վարում է կալուածատիրոջ դէմ:

Գործելով մի և նոյն կատարելագործված
միջոցներով, գիւղացին ապահովում է իր համար
մի լաւ կեցութիւն և նրանով, որ աշխատում է,
սաստիկ աշխատում է, այնպէս որ նրա աշխա-
տանքների ժամանակամիջոցը կարելի է հաշուել
8 ամիս. ձմեռվայ 4 ամիսներում նա գործ և
աշխատանք չունի, հանգստանում է, սակայն
այդ հանգստութեան ժամանակը ոչինչ տնտե-
սական վնաս չէ պատճառում, քանի որ գիւղա-
ցին ապահովված է: Ահա այդ տեսակ գործու-
նեթիւնն է, որի հիմամբ երկրագործ գիւղերը
հարաւային Ռուսաստանում խիստ զանազան
վում են միւս գիւղացի ազգաբնակչութիւնից.
ունեն լաւ տներ, հագնվում են աւելի և առ-
հասարակ անհամեմատ բարեկեցիկ են, վախ չու-
նեն, թէ քաղցած կը մնան:

Կարողաւոյ այդ նկարագիրը, դուք ակամայ
մտաբերում էք հայ գիւղացուն իր հնագրական
զանդարաշարժ գութաններով: Երբ պէտք է
այդ չաքալը և միշտ իր վիճակից դժգոհ աշխա-
տաւորն էլ հասկանայ, թէ ինչպէս կարելի է ա-
ւելի մեծ օգուտով գործադրել աշխատանքը, խը-
նայել ժամանակը և ձեռք բերել աւելի շատ ար-
դիւնք: Երբ պէտք է նա էլ սովորէ մեքենաներ
բանագինել իր դաշտում: Այս հարցերը յուսահա-
տական են երևում: Հայր երկրագործութեան,
գիւղատնտեսական աշխատանքների մէջ առ-
հասարակ անշարժութիւն սիրող է, չէ ցոյց տա-
լիս առաջ գնալու, կատարելագործվելու եռանդ:
Նա կաշկում է իր արարքին, թրջում է նրան իր
քրտինքով և յոյս ունի, թէ այդ քրտինքը բաւա-
կան է, որ երկինքը նրան առատութիւն տայ:
Կարելի ընթացքում նա գիւղատնտեսական ար-
դիւնագործութիւնը հասկացել է այն մտքով, թէ
պէտք է տարեկան պաշար չալթալթել իր ըն-
տանիքի համար և այդ հասկացողութիւնից շատ
հեռու չէ գնացել: Մի և նոյնն է նա և այսօր.
Բայց այսօր պահանջները շատ են, կենսի պա-
մանները բարդվել են և հայ երկրագործը զար-
կանում է, թէ ինչպէս է, որ այժմ պապերի հաս-
կացողութիւնը այլ ևս չէ օգնում: Փորձանակ
դրութեան պատճառը հասկանալու, փորձանակ
այն անելու, ինչ պահանջում է ժամանակը, երկ-
րագործը հայր յուսահատվում է, թողնում է իր
դաշտը և ձգտում է առևտրական դառնալ: Այս
դրութիւնը շատ լաւ պատկերացրած է Կիլի-
կիայի Ատանա քաղաքից գրած մի թղթակցու-
թեան մէջ, որ տպված է «Սուրբանդակ» լրա-
գրում: Ահա ինչ է կատարվում այնտեղ:

Ատանային ամեն բանն աւելի երկրագործ
է: Մերայինք մեծած մասամբ այդ արհեստով
կը պարապին, և ասկից տասնըննից տարի
առաջ շատ մը երկրագործ հարուստներ կըր-
նայինք հաշուել, որոնք չը կրնային ըմբռնել
ժամանակի պահանջը, և Տօրենական մասին
փարելով, երբէք չեն թողնուցած և բարեփո-
խած իրենց երկրագործի նախնական գործիք-
ները, և այժմ պարտքերու ծանրութեան տակ
կը հեծնէ մեծած մասամբ. բոլորովին փճա-
ցածներն ալ նուազ թիւ չեն կազմեր: Ցաւալի
է, որ այդ դառն փորձառութիւնը երբէք չէ
խախտած զանոնք իրենց միօրինակ ընթաց-

քէն, և երբէք չեն մտածած երկրագործական
և գիւղատնտեսական կենսական գիտութեանց
և ծանօթութեանց վրա, որոնք մինչդեռ մին-
չև ցարդ տեղական վարժարաններու ծրագիր-
ներուն մէջ իրենց կարևոր տեղը գրաւելու
էին:

Բայց Ատանայի մանր վաճառականները
համարեա ամբողջովին հայեր են: Բանը այն
տեղին է հասնում, որ, ինչպէս վկայում է թղ-
թակիցը, տեղացի ֆէլաշները հայերից աւելի
առաջադէմ են գիւղատնտեսական պարապմունք-
ների մէջ: Ճիշդ է, Թիբլիսի վերաբերմամբ
կայ այն դժբախտ իրողութիւնը, որ այնտեղ
աշխատաւոր մշակի գործը ապահովված չէ, բայց
միթէ մեղ մօտ էլ չէ նկատվում նոյն դրու-
թիւնը: Հայ գիւղացին չէ հասկանում, որ հողը,
տնտեսութիւնն է նրա ամբողջ ոյժը, նրա երջան-
կութեան միակ աղբիւրը. չը կարողանալով դի-
մադրել բազմաթիւ արդեւաւոր պատճառներին,
որոնք նրա քրտինքի պտուղները ոչնչացնում են,
նա յուսահատվում է, պակասեցնում է իր վըս-
տասնութիւնը դէպի իր հողը և թողնում է նրան:
Այսպէս է անձար տգէտը. իր մութ խելով
փորձում է ազատվել ծանր դրութիւնից, բայց,
ինչպէս և սպասելի է տգիտութիւնից, աւելի ևս
անեղանելի դրութիւն է ստեղծում իր համար:
Այժմ պիտի բաց անի այդ անօգնական մար-
դու աչքերը, իմ պիտի առաջնորդէ նրան, ցոյց
տալ թէ ինչպէս նա կարող է մնալ իր հողի
վրա և դառն զանգաւանը չանել:

ՆԱՄԱԿ ԿԱԶՁՈՒՆԻՑ

Յուլիսի 28-ին

Ներկինքը ժայռի նման չղքել է երկրի վրա՝
պարտւելով թանձր մէղրով. ահա որքան ժամա-
նակ է, որ մի կտոր ամպ չէ երևում նրա վրա:
Ամեն ինչ լուել է արեգակի կիզիչ ճառագայթ-
ների ճնշումից, միայն մերթ ընդ մերթ լուրւում է
սև ագռանների զողոցները: Ջրերի կարկաչանք
վաղուց լուել է, առուները, որ մի ժամանակ ի-
րանց վիկրտոցներով չորս կողմ կենդանութիւն
էին սփռում, լուել-չորացել են: Ծառերի տերե-
ները ծարաւութիւնից դեղնել՝ թափվում են,
կամ թաւաւել ու կծկվում են պտուղների հետ,
այնպէս որ արեգակի տաք ճառագայթները ա-
զատ կարողանում են ներս յայտնել ու արել
պարտէզներում մնացած բուսականութիւնը և
ցամաքած երկրի հիւթը: Մի խօսքով երկիրը
ծարաւութիւնից ցամաքած, տապից ճնշված՝
կարծես ծանր կերպով հառաչում է:

Այգեպանը իր վերջին յայտ կտրած՝ մտել է
հնձան, լալիս է իր սև ապգան և սիրտ չէ
անում այնտեղից դուրս գալ, տեսնել թողնած
ծառ ու թուփը: Նա ամենքին էլ առատ բաժին
է տալիս, որպէս զի այդպիսով կարողանայ Աս-
տուծու սիրտը բարցրացնել, քարացած երկինքը
կակցացնել... Մանաւանդ՝ աւելի շատ է նա
վարձատրում «գարդու» հայ աշուղին, որն իր
մեկամաղձոտ երգերով վշտակցում է այգեպանի
վերաւոր սրտին... Նրբեմն էլ նա, առանց աչք
զցելու ծառերին՝ զլլալով օտոնում է Սրասու
գետին, մէջքը յենելով ծառի արմատին՝ նստում
է այնտեղ և չիթուր անընդհատ ծիւղով նայում
է գետի խրոխտ ալիքներին և վշտացած մտա-
ծում, թէ ինչու մի օգուտ չէ տալիս նրանին իր
այգուին... և ցաւերով լցված՝ ձայնակցում է գե-
տին ու լուս արտասվում:

Այժմ ինչպէս կարող է չարտասվել դժբաղդ այ-
գեպանը, քանի որ նրա գերդաստանի ամբողջ
յայտը այգու պտղաբերութեան վրա է: Այգինե-
րին ջուր մատակարարող գետակն այս տարի
այն ստորեման նուազել է, որ համարեա թէ հա-
զիւ է կարողանում խնկու և գործածելու: Ջուր
մատակարարել ժողովրդին՝ Մերենիների ասե-
լով, գետակի այդ աստիճան նուազումն դեռ
չեն տեսած, թէ և աւելի երաշտ տարիներ է
պատահել: Այդ կարելի է բացատրել նրանով,
որ անդալ թիւ աշնանը բոլորովին անձրև չե-
կաւ, իսկ սաբերում եղած սակաւ ձիւնն էլ ծը-
ծեց, ցամաքացրեց չորացած գետինը. դրա հա-
մար էլ այս տարի նրախը համարեա թէ չը
վարաբց:

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванская ул., № 27